«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասից հանել « Հանրապետության Նախագահին և » բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ՝» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետը՝» բառերով:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում, 30-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում, 32-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետը» բառերով:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1. 5-րդ մասում՝ «քննչական կոմիտեի նախագահի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետի» բառերով:
2. 7-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը

փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերի։»։

ՀՈԴՎԱԾ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։